ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար և «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/8Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 21.07.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/8Հ գնման պայմանագրում 21.05.2026թ. կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՊՍ զեկուցագիր
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/8Հ պայմանագրի գնի նվազեցում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 11

21.07.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/8Հ գնման պայմանագրի

ք. Երևան «21» 05 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ա/Ձ Անահիտ Գևորգյանը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս տնօրեն Ա. Գևորգյանի, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 21.07.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/8Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում «3 293 906 (երեք միլիոն երկու հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր վեց)» թիվը և բառերը փոխարինել «2 563 650 (երկու միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր հիսուն)» թվով և բառերով:

1.1.2 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված «3 293 906» թիվը փոխարինել «2 563 650» թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	Ա/Ձ Անահիտ Գևորգյան
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,Մուսայելյան փ.տ. 49/2
կառավարական տուն 3	«Արարատբանկ» ԲԲԸ, «Գյումրի» 2 մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 15100429584700
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 57348351
Հ/Հ 900011040186	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Վ. Հարությունյան	_____ Ա. Գևորգյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.